

Պրոֆ. Հ. Գյուլի-Պեկոյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Երկրներն ու ժողովուրդներն պատմության մեջ քիչ չեն իրար հակադրել սոցիալ-քաղաքական ուժերի միջև տեղի ունեցած սուր, լարված պայքարի օրինակներ: Բայց անցյալի ոչ մի պայքար չի կարող համեմատվել այն պայքարի հետ, որ մղում է սոցիալիզմի երկիրը վերամական պապանացած իմպերիալիզմի դեմ: Մարդկության ամբողջ պատմության ընթացքում երբեք տեղի չի ունեցել այսքան վիթխարի ծավալ ու հզորություն, այսքան հակադիր պատմական դերեր, պարզացման տենդենցներ, քաղաքական ձյուտումներ ունեցող կողմերի բախում: Երբեք և ոչ մի երկիր ստիպված չի եղել պատերազմել այնքան հրեշալոր չափերով ոճրադործ, այնքան պաղրելի էություն ունեցող մի թշնամու դեմ, ինչպիսին հիտլերյան Դերմանիան է:

Պատմությունը մեր երկրի առաջ դրել է ողջ աշխարհն ստրկացնելու խնդրանքը պողպատաբուր թշնամուն ամենակործանիչ հարված հասցնելու խնդիրը: Մեր բազմամիլիոն ժողովուրդը լարում է իր անսպառ եռանդն առ խնդիրը չուտափուլթ կերպով լուծելու համար՝ հանդես բերելով իրեն հատուկ խնդիրները, աննկուն ողին և առաջադրած նպատակին հասնելու հաստատակամությունը:

Սովետական մարզն ավելի ու ավելի է համակվում հայրենիքի բարօրության համար անձնազոհ պայքար մղելու և՛ աշխատելու վիտակցութամբ: Նրա կրծքի տակ եռացող անհուն թշնամաույայություն, անսահման հայրենասիրության և մինչև արյան վերջին կաթիլը մեր արդար պործի հաղթանակի համար ի սպաս դնելու զգացմունքները ավելի ու ավելի մեծ չափերով են տուրբում նրա արարքները: Նպատակալաց գործունեությունը հայրենական պատերազմի ահեղ օրերին էլ ավելի մեծ չափով է զառնում սովետական մարդու անրաժան հատկությունը: Այդ գործունեության զրահորման չափով է որոշվում նրա դերը համաշխարհային պատմական նշանակություն ունեցող այն մեծ դրամալում, որ պարզանում է հիտլերյան հորդանների դեմ մեր երկրի մղած պայքարով: Հասկանալի է, թե ինչու ցայաուն դրամատիկական շեշտ սյիտի ունենա մեր հայրենիքի պատմական դերի և այս անօրինակ կովում նրա զավակների ջուցաբերած սխրագործությունների վեղարվեստական վերարտադրությունը: Դրամատիզմով են համակված հայրենական պատերազմի շրջանի սովետական արվեստի լավագույն վեղարվեստական գործերը, դրամատիկական

նպատակաւացութեամբ է հաղեցած սովետական մարդկանց մտքերն ու զգացումները երկող լիբիկան, նրանց հոյակապ պայքարը պատկերող էպիկան:

Հայրենական պատերազմի օրերին մեր զրականութիւնը հարստացաւ բազմաթիւ հիանալի գործերով, որոնք արտացոլում են սովետական հայրենասերների լազմազան պայքարը Հիտլերի ավաղակային քաղաքականութեան կրողների դէմ, սովետական մարդուն փոթորկող վսեմ կրքերը, նրա վեհ ձգտումների պափոսը: Այս զրականութեան մեջ դրամատուրգիան ներկայացւած է հասարակա-դեղարփեստական զգալի արժէք ունեցող գործերով: Մեծ տարբերութիւն կա այդ դրամաների մեջ թէ՛ գործող անձանց ինքնատիպութեան, առաջադրւած խնդիրների դրամատիկական լուծման, թէ պատկերված պայքարի կոնկրետ բովանդակութեան և թէ նրանց մեջ կիրառված դրամատուրգիական ձևերի ու մոտեցումների տեսակետից: Այնուամենայնիւ բոլորին էլ հատուկ են որոշ հատկանշական գծեր, որոնք միասնական ոճի կնիք են դնում նրանց վրա: Նրանք հաղեցված են խոր հուզականութեամբ, նրանցում կերպարված սովետական հայրենասերների համանման ապրումներն են հայրենիքի սերը և զրան ուղեկցող ասելու-թիւնը դեպի թշնամին: Չնայած որ այս զգացումները տարբեր աստիճանների լարունութեամբ են ներհան դալիս սովետական մարդկանց հուշկան կյանքի ամբողջութեան օգջ, և իրենց պարտաւորութիւնները դիտակցելու գործում նրանց համար ո՛չ համարժէք դեր են կատարում, բայց և այնպէս նրանք են սովետական մարդկանց գործողութիւնների հիմնական զրդիչ մոտիվները հանդիսանում: Այդ զգացումներն են մղում դեպի անողորմ վրիժառութիւն, դեպի անձնուրաց պայքար թշնամու դէմ: Այդ պայքարի բնթագում են սովետական մարդիկ հանդես բերում բալոյական զեղեցկութիւն, խոր մարդկայնութիւն, հողու վսեմութիւն: Ահա թէ ինչու այդ պիկանները կոնկրետ բովանդակութեան ու դրամատիկական ձևավորման տարբերութիւն ունենալով հանդերձ՝ իրենց իզեական դրույթներով և նպատակաւացութեամբ նույնատիպ են:

Երկու պայքարող կողմերի ներկայացուցիչները մեր պիկաներում պատկերված են առավելագույն չափով ճշմարտացի, իրական՝ իրենց շնավորութիւնների ամբողջ կոնկրետութեամբ: Ներհակ բանականների գործող անձանց սոցիալական դրույթների ծայրահեղ հակադրութիւնը ցուցադրելիս մեր դրամատուրգները չափազանցութիւնների, դուշների խտացման չեն դիմում: Սովետական դրողը, դրամատուրգը չի գիմում այնպիսի պրիումներ, որոնք աղավաղեն իրականութիւնն ի հաճույս որեւէ «ունայնչի»: Տենդենցն անց է կացվում իրերի օրեկտիւ բնթագումով. հիտլերականն իր արարքներով զրսկորում է իր դալանային էութիւնը և ամենալաւ երեւակայութիւնն անդամ չի կարող նրանից սովելի զադիր թի դէմք հորինել: սովետական հայրենասերի բնավորութիւնը պատկերելու համար ոչ մի իդեալիզացիա չի պահանջվում—նա հերոսական, անսահման հուզիչ ու վստահելի է ինքնին, նա հանդես է դալիս իր բնական խառնվածքով, ներքին մղումով է կատարում իր գործողութիւնները:

Սովետական հայրենասերների անմիջական ընդհարումը ֆալիստ մարդակերների հետ՝ միայն բացառիկ դեպքերում է տեղի ունենում այնպիսի պայմանների մեջ, որոնք զարգացման ենթարկվող դրամատիկական կոնֆլի-

լիկտի նախադրյալներ կարող են հանդիսանալ: Թշնամուն անմիջապես ոչնչացնելը կամ նրա զործունեություն կաշկանդելը բացառում են դրամատիկական պայքար ծավալելու հնարավորությունը: Սովետական զործող անձր, թշնամու հետ նույնիսկ «նորմալ» հարաբերություններ ունենալու դեպքում, ծայրահեղորեն հակադրամատիկական սոյալիսեր ցուցաբերող հակառակորդի հետ է զործ ունենում: Փաշիստն իր էությունը դրամատիկական ներհակություն սուբեկտ լինելու հնարավորությունից զուրկ է, բանդիտիզմի մոտիկ և վարքագծի սխալում դարձրած հրեշտ, իր ամայացած հոգով բնութանակ չէ դրամատիկական ապրումներ ունենալու: Եւ կարող է միայն սովետական մարդու ներքնաշխարհում դրամատիկական վիճակ ստեղծելու ազդակ դառնալ:

Միայն այն հիտլերականն ու ֆաշիստական ալենտն են հանդես գալիս դրամատիկական պարզացում պայմանավորող պերսոնաժների դերում, որոնք «անբարենպաստ» հանդամանքներին հարմարվելով՝ դիմում են իրենց դեմքի քողարկման միջոցին կամ որոշ նկատառումներով հետաձգում են իրենց անելիքը:

Ահա թե ինչու Հայրենական պատերազմի թեմատիկան մշակող մեր սյիւսներում սովետական մարդկանց և անսքող թշնամիների անմիջական հանդիպումը սովորաբար տեղի է ունենում Փինաբային տեսարաններում, երբ սկսւք է լուծվի դրամատիկական հանդույցը, կամ այն դեպքերում, երբ դրամատուրգն իր պիեսի իդեական բոյանդակությունն ավելի ցայտուն դարձնելու նպատակով, անհրաժեշտություն է զգում հատկապես գրոսերելու դերմանական սրիկաների ձգտումների ու զործելակերպի պայանային էությունը:

Ճշմարտացիորեն արտացոլելով իրականությունը՝ մեր դրամատուրգներն իրենց սյիւսներում սրտի կսկիծով ցուցադրում են մեր ժողովրդի կորուստներն ու զրկանքները, նրա կրած դաժան տվայտանքները: Սակայն մեր յուրաքանչյուր սյիւսը համակված է սովետական ժողովրդի օպտիմիստական մեծ ոգով, մեր ամեն մի սյիւսն արտահայտությունն է սովետական Հայրենասերի այն վստահության, որ հաղթանակը մենք ենք տանելու, որ հաղթելու է մեր արդար զործը: Եվ պատահական չէ, որ մեր դրամատուրգներն իրենց սյիւսներում սյիւսրվում և սյիւսրում են մեր հաղթանակների կազմակերպիչ, սովետական երկրի հզորությունն ու ամենահաղթ ուժի սիմվոլ բնկեր Ստալինի կերպարով: Մեծ առաջնորդի սիրելի պատկերը դրոշմված է և մեր սյիւսներում հանդես եկող սովետական հերոսների սրտերում: Նա՛ է, որ հաղթանակի է կոչում, հաստատակամութուն է կոչում և նողկալի թշնամու դեմ վերջնական հաղթանակ տանելու անսասան վստահություն ներշնչում:

Իր կյանքի գնով սխրագործություն կատարող սովետական Հայրենասերի վաս կերպար է ստեղծել Վսևոլոդ Ռոկկը «Ինժեներ Սերգեյ» պիեսում: Այս սյիւսն իր կոմպոզիցիայով առանձնակի տեղ է գրավում Հայրենական պատերազմի թեման չոչափող մեր մյուս դրամատուրգիական երկերում: Նրա մեջ դրամատիկական զարգացումը հիմնականում կենտրոնացած է երկու գլխավոր զործող անձանց՝ սովետական ինժեներ Սերգեյի և դերմանական ռազմական հետախուզության քողարկված զործակալ՝ ինժեներ Տայկինի շուրջը:

Կոնստրուկտոր ինժեներ Սերգեյը սովետական խոշորագույն հիդրո-էլեկտրոկայանների մեկի գերեկտորն է: Նա թաղում է ունի ու հնարագիտություն է դործադրել այդ ձևոնարկության մեջ: Նա սիրում է այդ կայանն իր պալատի պես: Նրա մաքրին ու հոգսերը նրա հետադա թարեկարգությունն են նվիրված: Սկսվում է հայրենական պատերազմը, գերմանացիներն ուխտագրուծ կերպով հարձակվել են մեր երկրի վրա և հսկայական կորուստների պնով առաջ են շարժվում: Ռազմական դործողություններն աստիճանաբար հասնում են այն չրժանք, ուր գտնվում է այն էլեկտրոկայանը, որի գերեկտորն է Սերգեյը: Նա ծանր բուպներ է ապրում, ինչպես թեքն է ասում՝ «կատունները ճանկում են իր սիրտը»:

Հուլիսի 3-ին հանգես է դալիս ընկեր Ստալինը սովետական մարդկանց ուղղած իր պատմական գիմումով: Եւ ցույց է տալիս ամբողջ տշխատանքը պատերազմի պահանջներին համապատասխան ձևով վերակառուցելու անհրաժեշտությունը, նշում է այն միջոցառումները, որոնց իրադործումը պարագայ է թշնամու գեմ հաջողությամբ պայքարելու դրավականն է: Սերգեյը միլիոնավոր սովետական մարդկանց հետ յսում է ընկեր Ստալինի էլույթը, որից հետո անհեաանում են նրա բոլոր կասկածանքները, և նա հաստատապես հավատում է սովետական ժողովրդի վերջնական հաղթանակին: Հիդրոկայանի պարակումի քարտուղարի հետ ունեցած դրույցի միջոցին նա ասում է. «Սկզբում չհասկացա բանի էությունը: Շատ էր անսարսելի այս ամենը—հանկարծակի հարձակումը, մեր դորքերի եւ քաղվելը... Իսկ ընկեր Ստալինն ամեն ինչ այնպես հստակորեն բացատրեց, որ պարզ դարձավ, թե ինչու և ինչ պետք է անել հետադադում, և ինչ է ինչու հետ...»: Սերգեյը միակողմանի է ըմբռնում ընկեր Ստալինի էլույթի իմաստը: Նա համոզված է սովետական ժողովրդի վերջնական հաղթանակի մեջ, բայց տվյալ պայմաններում այդ հաղթանակն ապահովող բոլոր անհրաժեշտ նախապայմաններն ամբողջությամբ չի պատկերացնում. «Ունկընդրելով առաջնորդի ցուցումներին, նա անտեսում է այն, որ գուցե այնպիսի դրություն ստեղծվի, երբ անհրաժեշտություն կզգացվի հիդրոկայանը պայթեցնելու: Երբ պարտկումի քարտուղարն ասում է, որ վտանգի գեպքում հարկ կլինի քարուքանդ անել այդ հոյակապ կառուցվածքը, Սերգեյը կարծես հոր է սթափվում և նա հուզված պատասխանում է. «Քմ գլխով ամենին էլ չի անցել, որ թերես հարկ լիսի ոչնչացնել մեր կայանը, այսպիսի կայան, ո՛չ, չի կարող պատահել»: Ռոկկը նուրբ հոգեբանական մոտեցում է կիրառել Սերգեյի նկատմամբ: Բարձր մասվոր կարողությունների տեր, Ֆերմ հայրենասեր Սերգեյը, կարծես թե դուրի է կարեորագույն խնդրի վերաբերմամբ տրամաբանական ելրահանում անելու ունակությունից: Այս վիճակը կարող է այնքան էլ համոզիչ չթվալ. բայց նա այսպիսին է գերազանցորեն: Սերգեյի համար հիդրոկայանը ո՛չ միայն մեծ արժեք ներկայացնող մի կառուցվածք է: Նա սիրում է այն, որպես իր ստեղծագործությունը: Նրա մեջ պայքար է տելի ունենում հողերանականի և տրամաբանականի միջև, նա անդիտակցարար վանում է իրենից տրամաբանականը: Միայն արտաքին մղումն է հարկադրում նրան վերանայել իր գիրքավորումը և ենթարկվել տրամաբանականի իրավունքներին:

Քարտուղարի հիշեցումից հետո նա հստակորեն գիտակցում է, որ հավանաբար հենց ինքն ստիպված կլինի պայթեցնել սիրնցյալ կայանը: Բայց

Նրա մեջ պայքարը դեռ չարունակվում է, նա չի կարող հաշտվել այդպիսի անհրաժեշտության հետ: «Այսպիսի կայանը պայթեցնել: Եթե հարկ լինի՝ խնայել կպայթեցնենք: Բայց դուրս չի մտնում, թե կարող է այդպիսի անհրաժեշտություն լինել»:

Պատկերելով Սերգեյին որպես ջերմ հայրենասերի, որպես մի մարդու, որի ուշադրության կենտրոնը նրան մատնված հիդրոկայանն է, Ռոկկը միաժամանակ նախադրատրամուսում է դրամատիկական կոնֆլիկտ ստեղծելու նախադրյալները: Ասպարեզ է լինում Տայկինը: Նա ուղարկված է Փաշխատական հետախույզությունից՝ ամեն կերպ արդյակելու հիդրոկայանի ոչնչացնելը, որպեսզի այն գրավելու գեղքում օդադորձվի իրեն ուղղակի կարիքների համար կարևոր մի օբյեկտ: Տայկինն աջակից շունի հիդրոկայանի աշխատակիցներին մեջ, նա կարող է դորձել միմիայն իր ռիսկով: Նա պետք է խիստ զգույշ լինի՝ ամեն բոլոր կարող են մերկացնել նրան: Տայկինի դրությունը գծվարանում է նաև նրանով, որ նա, ըստ իր տերերի յրացուցիչ հրամանի՝ պետք է ճիշդ թափի հավաքագրելու Սերգեյին: Տայկինը խորամանկ է և չբացահայտ, նա գիտակցում է, որ մենակ չի կարող պահպանել հիդրոկայանը՝ մինչև գերմանացիների գալը, ուստի և ջանում է իր կողմը քաշել Սերգեյին: Այդ չբացահայտ սրիկան արդեն նկատելի է, որ Սերգեյն աչքի լույսի պես պահպանում է հիդրոկայանը և միայն ծայրահեղ գեղքում կհամաձայնի պայթեցնել այն: Հենց դրան էլ կառչում է նա Սերգեյի տրամադրությունն ու գիտախորությունն իմանալու համար: Նա մտադրվում է համոզել Սերգեյին, որ հիդրոկայանի ոչնչացումը հսկայական հարված կհասցնի սովետական Երկրին և օդատար կլինի Փաշխատներին: Սերգեյի հետ մենակ մնալով՝ նա խիստ անորոշ ձևով, ակնարկներով ուղղում է բացել իր քարտերը, բայց հակահարված է ստանում Սերգեյից, որը նրան համարում է սխալ դրույթներ ունեցող մի պաշտոնակից:

Այս ժամկետից էլ սկսվում է իսկական դրամատիկական գործողությունը: Տայկինը՝ Սերգեյի հետ բացատրվելու տեսարանը պիեսի հաջորդված տեսարաններից մեկն է: Հեղինակը տալիս է Երկու կողմերի նուրբ բնութագիրը: Այդտեղ տեղի է ունենում հայրենասիրությունը համոզիչ տրամաբանություն հետ համադրած սովետական ազնիվ ինտելիգենտի մենամարտն իր աշխատակ մտքի հակասություններում խճճվող ծախսու աղաքների հետ: Տայկինը կանխատես է, ճարտարուն քողարկված է, բավականաչափ հիմք չի տալիս իրեն մերկացնելու համար: Սերգեյը դուրս է և է՛լ ավելի դուրս է դառնում ՆԳԺԿ-ի աշխատակից Սուրովցեի օդակցության տակ, սակայն, չնայած Տայկինի մասին շոշափելի փաստեր ձեռք բերելու իր քուրբ ճիգերին՝ հաջողություն չի ունենում: Տայկինն իր վարկեցողություններ և արտահայտած կարծիքներով միմիայն կասկած է ստաճացնում Նրա մեջ: Նրան պահում են իր պաշտոնում: Այս տեսարանն ունի մի թեթևություն, որ որոշ չափով նսեմացնում է սրա արժեքը: Հեղինակը մի քիչ պարզունակ է պատկերացրել Տայկինի և Սերգեյի հոգեբանական բարդ փոխհարաբերությունը: Տայկինն է՛լ ավելի ճարտարուն պիեսի սուաջ տաներ իր խաղը, իսկ Սերգեյն իր կասկածամտություն մեջ պիեսի ավելի ավտիվ լինելը:

Գերմանացիները մոտենում են հիդրոկայանի շրջանին, պալիս է պայ-

թեցնելու բողոքն: Սուրբոյցնի հանձնարարութեամբ Սերգեանք ձեռնաձուլս է լինում նախապարտադատական աշխատանքի՝ կայանի ոչնչացնելու համար: Ամեն ինչ պարապս է արդեն: Տալիկներ տաղնապի մեջ է, նա տեսնում է, որ տապալվում է կայանն անթիւար պահելու իր ծրագիրը: Փոփոխում Սերգեանի խիտ կարճատև բացակայութեանից՝ նա յարի մի կոտոր փոխում է կայանի պայթյունն անհնարին դարձնող մի ալլ կոտորով: Սերգեանք վերադառնում է կայանը, մտաւնում է հառաչին, ուղում է պայթեցնել, բայց չի պայթում: Նա սողում է, բայց արագ կոահում է, որ զա Տալիկնի դործն է:

Սկսվում է պիւսի կուլմինացիոն կետը: Պետք է փրկել գրությունը, կորզել Տալիկնի գաղտնիքը: Սերգեանք յալ ձանաչելով Տալիկնին և հաշի տանելով մոմենտը՝ գիմում է հողերանական ներդործման մեթոդին: Տալիկնին բռնելու համար նա ձեռնում է, թե խիտ գոհ է նրա արածից: «Կեցցես, — ասում է նրան, — դու օղնեցիր ինձ: Քիչ էր մնացել պայթեցնել աշտպիսի կայանը աշխարհումս միակը: Ընծեների համար դա ոճրագործութեան է: Ես ներքուստ տանջվում էի և հիմա միայն ինձ համար պարզ դարձավ, որ իրաւունք չունեի այդ բանն անելու: Ենթակալ եմ քեզանից»: Տալիկնի մոլորութեան մեջ է գլխած, նա երկմում է, չգիտե՞ հա՞վառա՞ Սերգեանին, թե ոչ: Սակայն վերհիշելով Սերգեանի հետ ունեցած խոսակցութեանները, երբ Սերգեան նրա գեմքը պարզելու նպատակով ակնարկներով հասկացնում էր, որ իբր թե համամիտ է նրա մտածելակերպին, մեկարձելով, որ այն ժամանակ Սերգեանք բալականաչափ համարձակութեան չունեցով բացահայտորեն իր կողմն անցնելու՝ հակվում է հա՞վառալու նրա խոսքերի անկեղծութեանը: Տալիկնի երկմութեանը վերջնականապես փարտուելու համար Սերգեան հայտարարում է, թե ուղում է մնալ կայանում և անցնել գերմանացիներին կողմը: Տալիկնն այս հայտարարութեամբ վերջնականապես համոզվում է, որ Սերգեան իր ախի մարդկանցից է: Ես խիտ գոհ է, որ իրականում է Ֆաշիստների երկրորդ զանկութեանը:

Սկսվում է ամենադրամատիկական մոմենտը: Սերգեան շտապում է ամեն մի բողոքն թանդ է. գերմանացիներն արդեն մոտենում են հիդրոկայանին: Նա պետք է կորզի Տալիկնի գաղտնիքը: Կհաննի՞ նա իր նպատակին, թե՞ Տալիկնը կիտրի իրեն, չի հայտնի պայթյունը չհաջողվելու պատճառը: Սերգեան խիտ վարդաւորեն հարցնում է Տալիկնին, թե ինչո՞ւ պայթյունը տեղի չունեցավ: Տալիկնը կարծելով, թե հիմա ամեն բան կարող է փստահել նրան՝ հայտնում է իր արածը, և երբ կստնում է ցույց տալու լարի փոխված կոտորները՝ Սերգեան օգտվում է հարձար մոմենտից, կոանն իջեցնում է նրա գլխու ու սպանում:

Ընդհանուր առմամբ վարդաւորութեամբ դորդացրած այս տեսարանը դերձ չէ մի ցավալի թերութեանից: Սերգեան շտապում է գաղտնիքը բացահայտելու, նրա հետ միասին շտապել է և Ռոկկը: Տալիկնը հեշտ ու չուտ է գիջում իր գիրքերը: Սերգեան վերաբերմամբ նրա ունեցած կասկածամտութեան վարդաւորութեան հողերանորեն ափսոս չուրը պատճառարանութեան է պահանջում: Պիւսը մոտենում է իր փոխձանին: Ռոկկը պատկերում է Սերգեանի ու գերմանացիների հանդիպման լարված տեսարանը: Գերմանացիները դալում են հիդրոկայանը: Սերգեան կայանը պայթեցնե-

յու մի նոր ծրագիր է հորինում և ապետք է մեծ ճարպկություն և քննարկութիւն: Նա ներկայանում է որպէս իր ձեռքով սպանված Տալիինը՝ օգտվելով այն բանից, որ Փաշխտաներից ոչ ոք իրենց չի ճանաչում ղեմքով: Սերգեի ղերը խիստ սխալում է, ամեն մի պատահականութիւն կարող է մերկացնել նրան: Բայց նա հաղթական է դուրս գալիս փորձութիւնից: Գերմանացիները նրան ընդունում են Տալիինի տեղ և նշանակում են հիդրոկայանի ղերակառ: Նա պարտաւորված է պայթեցունքի գլուխը բերել վերին աստիճանի գլխարին պայմաններում՝ հենց իր կյանքի գնով: Բայց նա հանդիսանում էր աստիճանի հետամուտը—հայրենիքի նկատմամբ ունեցած պարտականութիւնը պետք է կատարվի: Պայթեցման աշխատանքն արդէն կատարված է: Սակայն Սերգեիքը պատրաստվում է ոչնչացնել ոչ միայն հիդրոկայանը, այլև այնտեղ գտնվող թշնամիներին: Նա հարձար սահի է սպասում 1. ահա, երբ Փաշխտական ղերակայան իր շքամբի հետ լսում է նրա բացարձակութիւնները հիդրոկայանի մասին՝ նա թանում է երրորդ հատուցը, որով պետք է կատարվեր պայթեցումը, և իր շնորք փոխելով՝ գիմում է կայանում համարված ղերմանական ղերամբին հետևյալ բաւերով. «Հիմա ես կմիացնեմ այս հատուցը և... դուք ամենքդ էլ կայանի հետ դուրսի ծոցը կգնաք, սրիկաներ, հիդրոկայան ղերմաններ: Հապա ի՞նչ, կործանվեք, որ ինձենք Սերգեիքի մատուցարանի վրա ձեզ նվեր կհրամայի մի այսպիսի էլեկտրոկայան: Սխալվեք եք, սրիկաներ»: Հատուցը միացվում է, լսվում է մի գործուղելի գլխարից. հիդրոկայանը պայթեցված է:

Ռոկկին ամբողջ վերջին տեսարանը դարձնացրել է դրամատիկական մեծ վարպետութեամբ: Դրամատիկական գլխարին խնդիրը փայլուն կերպով է լուծել նա, չկա ոչ մի անհամոզիչ դրոթիւն, չի կիրառվում ղերարվեստական կերպարներումը ջրասող որեւէ միջոց:

Վսեմուդ Ռոկկի սկանտկ դրամատուրգ է: Սյա հանդամանքն անդրադարձել է նրա սրիկային վրա: Իր բոլոր նմանութիւններով հանդերձ՝ Ռոկկի թույլ է տվել մի շարք դրամատուրգիական վրիպումներ: Տեղ-տեղ նա շատ է համատարիմ մնացել իրականութեանը և չի կարողացել դրամատուրգիական վերամշակել սյան: «Ինձենք Սերգեիքը» կոմպոզիցիոն տեսակետից խախտում սրիկա է: Նրա մի քանի պատկերները խիստ թույլ կերպով են միահյուսվում հիմնական գործողութեան դրամատիկական հյուսվածքին: Նրա անձերից շատերը հանդէս են գալիս ոչ որպէս դրամատիկորեն գործող անձինք, չեն նպաստում ֆարուսային գծի նպատակասլաց դարպացման, մտցված են արտադրամատիկական ձևավորման շրջանակների մեջ և ըստ էութեան ավելի շուտ ընդթաղված են պատմողական ասպեկտով: Սերգեի հուզիչ կերպարը՝ որ մեզ գերում է աննկուն արիւթութեամբ, բարոյական ղերակցութեամբ, և ղերվանք ու ցասում աստիճանող ղերմանական անարդ գործակալ Տալիինի կերպարը՝ դրամատիկորեն ավելի ամբողջական, արժեքավոր կլինէին դրամատիկական պիտի ղերված գործողութիւնների ասկայութեան ղերարում:

«Ինձենք Սերգեիքը» սովետական մարդու ղերմութիւնը բարձրացնող սրիկա է. դա սովետական հայրենասիրութեան ասկեկտըն է և տոբր թշնամու նկատմամբ տածված անմար ատելութեան արտահայտութիւնը: Ռոկկի էրման է բերում հոգերանական վերլուծման և կյանքի ևրույթները հասա-

կորեն վերարտադրելու մեծ սիրք. հուսանք, որ հետագա պիեսներում առաջանալու է հեղինակին կհաջողվի վերացնել կոմպոզիցիոն մեղանշումները:

Հայրենական պատերազմի հերոսապատումին է նվիրված նաև բանաստեղծ Կոնստանտին Սիմոնովի «Ռուս մարդիկը»: Այդ պիեսը մեծ ու աբսոլյուտ հաջողություն ունի, չի իջնում թատրոնների բեմերից և ամենուրեք ընկալվում է սրտալի ջերմությամբ: Ո՛րն է այդ հաջողության գաղտնիքը:— Այս պիեսը պոետականացնում է հայրենիքի անձնվեր սերը և դավերդում արյան ծարավի թշնամու նկատմամբ առավել անշնչ արիությամբ: Նա ցույց է տալիս, թե ինչպես հանուն այդ սիրո ուսումնասիրողը դառնում է պարտականության հերոս, թե ինչպես համակվելով վառ առեղծվածով՝ նա լարում է իր ուժը և սխրությաններ կատարում:

Բնավորության այս սքանչելի հատկությունների կրողները պիեսում ամենասովորական, պարզ մարդիկ են: Այդ համեստ մշակները պատերազմից առաջ ապրում էին իրենց ծանոթների, բարեկամների, պաշտոնակիցների շրջանում և ուժը ներածի չափով մասնակցում էին ստեղծագործական հանուր աշխատանքին: Գերմանական իմպերիալիզմը ուխտագրծորեն հարձակվեց մեր երկրի վրա: Սկսվեց դաժան պայքարը նենդ թշնամու դեմ: Եվ այդ մարդիկ մնալով առաջվա պես սրբալի՝ վերափոխվեցին և պայքարի մեջ ցուցաբերեցին այն բովանդակ լավագույնը, որ դաստիարակել էր նրանց մեջ սովետական վեհ կուլտուրան: Նրանք հույսով ու սրտով սովետական բաղձամիլիոն ժողովրդից են: Նրանց զոհացումները հիացնում են իրենց ներքին սրբությունը—գրանց վրա կա համամարդկության կոնֆեր: Այդ հասարակ սովետական մարդիկ կատարում են այն, ինչ կաներ ամեն մի սովետական մարդ՝ նրանց վիճակում գտնվելիս: Նրանք ոչ միայն որոշ անուններ կրող անհատ միավորներ են, այլ դրա հետ նաև ընդհանրացած գեմքեր: Նրանցից ամեն մեկի մեջ մենք գտնում ենք մեր եսի մի մասնիկ, մեր զոհացումների, մտքերի, ձգտումների բեկումը: Սիմոնովի ուսումնասիրողի ամբողջական, հետազոտական բնավորություններ են: Հակասություններ չկան նրանց գործողություններին, պայքարի պրակտիայի և բարոյա-քաղաքական դիտարկության մեջ: Սիմոնովը պատկերում է նրանց ճշմարտացիության, նրանք առանց որևէ անփկտացիայի, առանց արտաքին պափոսի մարդիկ են, նրանք բանականության, անկեղծության, ուղղամտության մարմնացումն են: Նրանցից և ոչ մեկը հանդես չի դալիս որպես Սիմոնովի մտքերի ու զոհացումների շեփոր: Մեր պիեսներում կարիք չկա դիմելու այդ մեթոդին: Հեղինակն ինքն է իրեն տեսնում այդ մարդկանց մեջ: Նրանք ունենալ կերպով նրան են ներկայացնում: Սովետական մարդկանց պայքարը Սիմոնովի պիեսում անմիջականորեն և ուղղակի է արտահայտում այն ըստ բնույթի դրամատիկ կոնֆլիկտը, որ առաջ է եկել ծայրահեղորեն հակադիր հասարակական ուժերի՝ սովետականի ու ֆաշիստականի բախումից:

Այս պիեսում չկան անձնական չափեր հետապնդող հերոսներ, մասնավորապես ենթարկված է հանուրին: Նրա գլխավոր գործող անձը սովետական մարդիկն են՝ ի մի վերցրած: Այս հանուրը չի կլանում մասնավորը: Դասականության դեմքերից դուրի, անձնականի սահմանները ջնջող, բայց որ անկրկարան կոնկրետ լծի տակ դրված մարդկանցից կազմված մի զորք: Հավաք չէ:

Սիմոնովը ցույց է տալիս ոչ թե սխեմաներ, այլ կենդանի, իրական մարդիկ: Ընդհանուր պայքարում նրանցից ամեն մեկը կատարում է իր դերը՝ ըստ իր անհատական տվյալների, և րեան բերելով իր բնավորության էականը: Երկու թշնամի բանակների դարձույ անձանց դրամատիկական հակադրությունը Սիմոնովի մոտ ոչ թե որոշ պերսոնաժների արտահայտած վերացական սկզբունքների պայքարով է հիմնավորված, այլ հարևանական պատերազմի պատմական իրականություն անմիջական կոնկրետ տվյալներով: Սիմոնովի պիեսում այդ իրականություն մեջ է սովետական մարդկանց անձնության քաջությունն ու խիղախությունը՝ հակադրված մեր իշխմամբ ապրող գերմաների ստորությունը, և րկչությունը և մորթապաշտությունը, հասարակ ունե կանանց մարդկայնությունն ու վեհանմությունը—հրաբրյան հոգեգրավների սաղիսական դաժանությունն ու անսահման ամարդիությունը, հայրենիքի նկատմամբ ունեցած պարտականությունը կատարող սովետական սաղմիկի անձնագրությունը—սովետական մարդկային թշնամու զայր ու շնչին հոգուն: Սիմոնովը վարդապետ է դառնում ունե մարդկանց բնավորությունը: 62-ամյա մայր Վասիլից սկսած մինչև 18-ամյա չոֆեր Վալյան—հոգևոր հրանալի կողմություն ունեցող և միասնական նպատակաուղղությունը դրված անհատականություններ են:

Իր հերոսներին ցուցադրելու համար հեղինակն բնորոշ է դաժանորեն կական խիստ հաջող իրադրություն: Գործող անձանց մի մասը գտնվում է դերմանացիների դրամած քաղաքում: Քաղաքի մյուս մասում՝ գետախորշի մյուս կողմը սովետական պաշարված կայադրն է, որի պետ Սաֆոնովը կապ է պահում քաղաքի ու քաղաքն ապաստարանում փութացող զորմիր անակի դորմասերի հետ՝ իր սուրհանգակներին՝ Վալյայի ու Գյորայի միջոցով: Կայադրը քաջաբար պաշտպանվում է, բնկնում են հրանալի մարտիկներից չառերը, բայց կայադրը հաջողությամբ կատարում է հրամանաարության առաջադրանքը և հեշտացնում գերմանացիների վրա դրոհող զորքերի գործողությունը: Փաշխատները փտարվում են քաղաքից և նրա վրա նորից է փողփողում կարմիր դրոշը:

Սաֆոնովը մի սովետական մարդ է, որ ունայ, զգաստ մոտեցումը համարում է գեղեցիկ կյանքի մասին ունեցած սոմանտիկական երարտին: Նա բնդունակ կաղմակերպիչ է, լավ տարատեղ, անվեհեր սաղմիկ՝ պատերազմում հայրենիքի բարձրության համար գոհելու տմենաթանգ քանը: Նա քնքույշ և անկեղծ կերպով սիրելու բնդունակ պատանու ողջախոհ հոգի ունի: Նա մեռնելուց չի վախենում, միայն թե ափսոսում է գուր տեղը կորչել: «Պատրաստ եմ ես մեռնել, բայց սպուտով մեռնելն է ինձ չահագրդում»—ասում է նա: Սաֆոնովը սովետական հայրենասեր է, տենդապին աշխատող և, որպես այդպիսին՝ ջերմ սեր ու նվիրվածություն է առնում գեպի բնկեր Ստալինը: Դիմելով իր շտաբի պետ Վասիլին՝ նա ասում է. «Ոչ թե ուրիշները, այլ ես ու դու առաջ կդնանք: Գնանք, և ամեն ինչ նախ՝ Ստալինը...»: Ես, Ալեքսանդր Վասիլիչ, պատահում է, որ սրան չեմ համարում, մյուսին չեմ համարում, իսկ նրան միշտ և ամեն տեղ համարում եմ: Երբ ես լսեցի նրա հասը սաղիոցով՝ կոնտուզիաս գետ չէր

անցել, բառերն ականջիս մեջ խառնվում էին, բայց միևնույն է՝ դրանց յոթաբարեն նրա ձայնը լսեցի. «Իսկ առ, Սափորնով, և ոչ մի քաշ էտ: Մեռի՛ր, բայց կա՛նգ առ, կո՛վի՛ր, բայց կա՛նգ առ: Տառն անգամ յիրա-
վորվի՛ր, բայց կա՛նգ առ»:—Ահա թե ինչ լսեցի... ահա թե ինչ ասաց նա
անձամբ: Վասինը հիանում է Սափորնովի ոգևորությամբ. «Փանտաղյոր
էք դուք, Իսկան Նիկիտիչ».—ասում է Վասինը նրան: Բայց Սափորնովը
կարծում է, որ միայն ինքը չէ, որ ոգևորվում է պարտքի պիտակցու-
թյամբ, մեծ սկզբունքներ մտցնում կյանքի մեջ: Նա պատասխանում է
Վասինին. «Իհարկե, բա ի՞նչպես: Դու էլ Փանտաղյոր ես. մենք ամենքս
էլ ուսաներս Փանտաղյոր ենք, դրա համար էլ ավելի համարձակ ենք
կոչվում»:

Եվ իրոք, սուս մարդիկ «Փանտաղյոր» են և Սիմոնովի պիեսում: Նրան-
ցից ամեն մեկն իր ձեռով է արձագանքում հայրենիքի կոչին, ամեն մեկի
սրտում գրված են «Ոչ մի քաշ էտ. մեռի՛ր, բայց կա՛նգ առ» հրեղեն
բառերը: Ահա Մարֆա Պետրովնան՝ հերոս Սափորնովի արժանավոր մայրը,
ասյուծի սիրտ և մարտիկի արիություն ունեցող մի կին: Չի կարելի չի-
նարհել այդ հասարակ սուս կնոջ բարոյական մեծությունը առաջ: Եւ
զայրույթով հարձակվում է դերմանական մարդակեր սպաների վրա՝ ցա-
սումով մեղադրելով նրանց իրենց կատարած ոճրագործությունների հա-
մար, չթաքցնելով իր ատելությունը, իր արհամարհանքը: Հիսուսյան յա-
կոտ Վերների մոտ հարցաքննության ենթարկվելիս՝ նա անվերայ մահվան
դեմ հանդիման գիտնում է նրան. «Ես լսել եմ, որ դուք Շտետտին քաղաքից
էք, պարոն սպա»։ «Այո»։— ասում է Ֆաշիստը, — հաստատելով, որ
Մարֆա Պետրովնան չի սխալվում—և զայրույթով ու վրդովմունքով յի
պատասխան է ստանում. «Կուզենայի անտես թուշի աշտեղ՝ ձեր Շտետտին
քաղաքը, ձեր մայրերի բուկը բռնել ու օդով բերել այստեղ և մերեից
ցույց տալ, թե ինչ են արել նրանց որդիները: Եվ նրանց ասել. «Տես-
նում եք, թե ինչեր եք ծնել, էգ չներ, ինչպիսի ճիմպներ եք աշխարհ
բերել, ինչպիսի հրեշների եք ծնունդ տվել»: Եվ եթե դրանից հետո նրանք
չանիծեն իրենց պապերին՝ ապա կսպանելի ես նրանց ձեզ հետ՝ նրանց
որդիների հետ»: Մաղձով ու թշնամանքով յի այս խոսքերն արտասանում
է ո՛չ միայն Մարֆա Պետրովնան—գա մեր բովանդակ երկրի ձայնն է:
Շտետտինի մայրերը չեն անիծում իրենց որդիներին, այլ պատվիրում են
ուղարկել Մարֆա Պետրովնաներից կողոպտած իրերը. Ֆաշիստական զին-
դաճում խոչտանդված պտուղ սուս կինը մահվան դատախազ է կարգում
հիսուսյան Պերմանիային՝ արտահայտելով իր խոր ատելությունը նրա
նկատմամբ:

Մայրը Վասինը մեկն է այն սովետական մարդկանցից, որոնց համար
ջերմորեն սիրված հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի կատարումը դերի-
վեր է ամեն բանից: Եւ պարմիր Բանակի կարգապահության մարմնա-
ցումն է, ուսական ուղմական ոգու բավադրյուն տրադիցիաների ավանդա-
պահը: Վասինը զիջումներ չի անում իր խղճին, նա անձամբ մերկացնում
է իր քրոջ տղային՝ այդ սանարդ դերմանական դորձակալին, որն ուրիշի
փաստաթղթերով ծոցտված՝ լրտեսությամբ, փաստարարությամբ է դժադ-
վում: Վասինը հերոսի մահով է բնկնում ուղմադաշտում՝ կարմիրբանա-
կայիներին մարտի տանելիս: Ստացած վերքից արդեն ուժասպառ եղած՝

նա համաքում է վերջին ուժերը և բարձր ձայնով ասում. «Եյանքումս վեր-
ջին անգամ ուղում եմ ասել՝ փա՛ռք ուսական ղեներին»:

Հանձին շոֆեր Վալյայի՝ Սիմոնովն ստեղծել է այն սքանչելի ազդիկ-
ների կերպարը, որոնք այնքան անձնագուհ կերպով օղնում են մեր մարտիկ-
ներին կռվի դաշտում: Վալյայի բնավորությունը բարդ չէ, մտահորեղանը
ոչ լայն, բայց սա ղերում է մեզ իր ճշմարտացիությամբ, բարոյական
մաքրությամբ և բարեկամների ու ծանոթների հետ ունեցած վերաբեր-
մունքի անմիջականությամբ: Վալյան ներխուժողաժողովյան հակամետ չէ,
որևէ պրոբլեմի լուծում չի առաջադրում իրեն, նա կմպիրիկորեն է մտա-
ծում: Սաֆոնովյ լուրջ հանձնարարությու է տալիս նրան և պատվիրում,
որ անպայման պետք է կառարի, որովհետև հայրենիքի պահանջն է դա:
Հայրենիք բառը լսելիս՝ նա ցանկանում է իմանալ, թե ճիշտ է ինքը մար-
վում, որ հայրենիքը պատկերացում է այլ կերպ, քան ուրիշները: Ուստի
ղիմում է Սաֆոնովին. «Գիտե՞ք ինչ, Իվան Նիկիտիչ, ամենքն էլ ասում
են հայրենիք, հայրենիք... և հավանաբար մի շատ մեծ բան են պատկե-
րացնում, երբ այդպես են ասում: Իսկ ես՝ ո՛չ: Մեզ մոտ՝ Նովո-Նիկո-
լանսկում մի խրճիթ կա գյուղի ծայրին, դրա մոտեն էլ մի գետակ և եր-
կու բարդի: Ես մի ձոճ էի կապել դրանցից: Երբ հայրենիքի մասին են
խոսում խճ հետ՝ ես այդ երկու բարդիներն եմ հիշում: Գուցե դա լավ
չէ»: Այդպես էլ անկեղծ ու սրտասուզ է Վալյան իր սիրո մեջ: Նա ու
Սաֆոնովյ սիրում են իրար, չեն թաքցնում իրենց սերը, բայց այդ սերը
չի կլանում նրանց: Վալյան Սաֆոնովի համար բարեկամ է ու ընկեր, բա-
ցի դրանից՝ Ն. ստորադրյալ: Երկուսն էլ կարծում են, որ սերը պետք է
ենթարկվի հայրենիքի նկատմամբ եղած պարտականության ու սիրուն:
Դժբախտաբար այս աղջկա հիանալի բնավորությունը արժանի կատարելու-
թյամբ չի գծված, նա մասամբ սրաշտոնական ղեր է կատարում:

Ահա բուժակ Գլորան՝ Սիմոնովի պիեսի ամենահաջող ղեմքերից մեկը:
Գլորան սշխույթ, դյուրահաղորդ, զվարթ բնավորությամբ մի մարդ է՝
կատակելու, ղվարճախոսելու հակամետ: Այս չափազանց կենսասեր մարդու
ղնում է, համարյա թե, ղեպի անխուսափելի մահը, որովհետև ղիտե, որ
իրեն տրված հանձնարարության կատարումը պետք է նպաստի բաղադր
չտեստինյան շնամագերի թաթերից արադ աղատելուն: Գլորան՝ այդ ոուս
մարդը սիրում է երգել, երգը նրա համար այն ֆանտազիոթյան գրսեո-
րումն է, որի մասին խոսում է Սաֆոնովյ: Վտանգավոր առաջադրանքը
կատարելու ղնալուց առաջ՝ նա մի ուժգույ մեկ բաժակ օղի է խմում և,
ղիմելով կապիտան Գալբրիովին՝ ասում է. «Ի՞նչ ես նայում, ընկեր կա-
պիտան: Չէ՞ որ սա ոչ թե քաջության, այլ տաքանալու համար եմ խմում:
Քաջության համար սա բանի պետք չէ: Քաջության համար երգն է ին-
օղնում»: Գլորան անկեղծ բարեկամ է Ն. անձնիկը ընկեր: Նա մեծ կենսա-
իրոճ ունի, արադ ճանաչում է մարդկանց, կարող է խաբել թշնամուն,
Վալյայի հետ ընկնելով ֆաշիստական գնդանը՝ նա ղիտե, որ գերմանացի-
ներն բոտ իրենց նենդ սովորության՝ քաղաքից հեռանալուց առաջ կզնդա-
կահարեն իրենց: Եվ իրօք. նրանց վրա է ուղղված հիտլերականի ավտո-
մատը: Մահվանից առաջ էլ Գլորան երևան է բերում իր բնավորության
ղեղեցկությունը, պատմարի պես կանգնում է Վալյայի առաջ և երգելով
է մահ ընդունում: Ո՛չ, արյունարբու շուն Հիտլերին չի հաջողվի ստրկաց-

